ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2017թ. թիվ 139-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի ԹԻՎ 80-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդված 2-րդ մասի 3-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով կատարված կադրային փոփոխությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի մարտի 25-ի «ՀՀ Լոռու մարզում երեխայի տարիքը որոշող հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 80-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. ապրիլի 11
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2017թ. ապրիլի 11-ի
թիվ 139-Ա որոշման

«Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2011թ. մարտի 25-ի
թիվ 80-Ա որոշման

ԿԱԶՄ
ԵՐԵԽԱՅԻ ՏԱՐԻՔԸ ՈՐՈՇՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա.Նալբանդյան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ
Վ.Ջաղինյան - հանձնաժողովի քարտուղար, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ

Հանձնաժողովի անդամներ.

Ս.Խեչումյան - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
Ռ.Պողոսյան - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ, Լոռու մարզի գլխավոր մանկաբույժ
_____ - տարածքն սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական առողջապահական ընկերության պատասխանատու մանկաբույժ
Գ.Քարհանյան - «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ռ.Վարոսյան - ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ /համաձայնությամբ/»

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ն.ՍԱՐԳՍՅԱՆ